


ՔԱՆԻՔԻ ՎԱՐՈՒԺԱՆ

Գրեց՝ Հ. Ս. ԵՐԵՄՅԱՆ



Մոնտէրէլլունայի կայարանէն Սան Ջենոն մեկնելու կը պատրաստուէի: Մուրատ-Ռաֆայէլեան վարժարանի ուսումնապետ Հ. Յովհան վրդ. Աւզերեան ինծի իմացուց, որ նորեկ աշակերտներէն մին կը վախաբէր զիս տեսնելու: Քիչ վերջը իմ առջեւ կանգ կ'առնէր պատանի մը եւ ինծի շնորհակալ կ'ըլլար, որ «Բազմալէպ»-ի մէջ անկիւն մը տուած էի իր Եիկիտ Տօնէլ քերթուածին: Ես շնորհատրեցի զինքը ու քաջալերեցի իր գրիչը:

Առաջին անգամն էր որ ես կը տեսնէի այդ պատանին, Դանիէլ Չրպուքերեանը, ապագային Յեղիմ Սիրաք Երզող Վարուժանը:

Այդ օրէն վերջը մանաւանդ Սարաուոնբու ձեռագիրը կարդալով, այլեւս համոզուած էի, որ անոր մտքին ծոցին մէջ հանճար մը կը մարմնանար: Տակաւին Գեղուճիկ-ին հիմը նոր էի դրած, եւ 1905-ին կը հրատարակէի իմին այդ պատկերազարդ թերթին մէջ Վարուժանի «Սարաուոնբու» ամբողջովին:

Ճիշդ այդ թուականին, ես Ս. Ղազարէն կ'անցնէի Վենետիկ Մուրատ-Ռաֆայէլեան վարժարանը, ուր իբրեւ ուսումնապետ՝ բնականարար առիթ կ'ունենայի աշակերտաց հետ տեսչա տեսնուելու:

Այդ ատեն, արդէն Վարուժան նոյն վարժարանի լիկէիոնական շրջանը աւարտած էր. դասընկերները կը պատրաստուէին համարաբար մտնելու. իսկ իր վիճակը անորոշ կը մընար: Ես զինքը շատ ակտուր, շատ լքեալ կացութեան մէջ գտայ: Իր ոսկեղրուագ երազները ազդուներու թեւերուն պէս սեւցեր էին: Ան խրատոյսի եւ քաջալերութեան պէտք տուէր: Ես գզացի, որ անոր ապագան փրկելու միջոցներուն վրայ հարկ էր լրջօրէն մտածելու եւ գործելու:

Այդ ատեն Վարուժանի մեծաւոր տեսուչն էր Վենետիկի Միսիթարեաններէն ծանօթ աստուածաբան Հ. Ստեփան վարդապետ Սարեան, որուն օրով վարժարանին հին պահարանողական նահապետական կացութիւնը յեղաշրջուած էր:

Յեղափոխական դարձօնքը գգալի կ'ըլլար. վերապահ Պոօշեանցի դաւակը հոն էր. Դաշնակցական նոր սերունդ մը կը խմորուէր: Վարուժանը արագըլուխ կ'ըլլար յեղափոխական ընկերներուն, որոնք սակաւաթիւ չէին. անոնք դադունի կը կարդային «Դրօշակ» եւ «Pro Armenia»: Գաւառացիներէն ամենէն աւելի Երզնկացի աշակերտները վառօդ կը գնէին Վարուժանին բռնկած խառնարանին մէջ:

Հայաստանի արդար դատին նուիրուած այդ երկու թերթերն «Դրօշակ» եւ «Pro Armenia» կը հաղորդէին երկրին սեւ ու կարմիր բուրբը. Վարուժանը դանոնք կարդալով զեռ աւելի կը տխրէր, հալումաչ կացութեան մէջ դրասեղանին առջեւ կ'երեւակայէր «Ջարդը» եւ սրտին ամբողջ ակերը բացած, թղթին վրայ իրա եռուզեռ բողբոջները կը թափէր: Ան, դպրոցաբանի յատուկ անտրակի մը մէջ ամփոփած, ջարդերուն քերթուածը ինծի կը յանձնէր եւ կը խնդրէր դիտողութիւններս: Ես միայն սքանչացումս կը յայտնէի. եւ նոյն ատեն այդ գրութիւնը կը յանձնէի վարժարանիս հիւր Սմբատ Բիւրատին եւ կը խնդրէի, որ ինքն ալ հաղորդակից ըլլայ «Ջարդի» գրական նորասքանչ յայտնութեան: Ան չյայտնեց իր սքանչացումը, այլ քննադատեց զայն: Չարմանք չէր. նոր արուեստի կուռքին հին քուրմերը չեն ծնրադրեր:

Վարուժան իր աշակերտութեան օրերուն մէջ, ինչպէս նաեւ շատ տարիներ անցնելէն վերջը ինծի կ'ըսէր, թէ իր գրելու գեղաքանդակ ոճը եւ հայերէն լեզուի պերճութիւնը եւ գեղեցիկին ճաշակը կը պարտի Քաղկեդոնի Միսիթարեանց վարժարանին մեծաւոր Հ. Արիստակէս վրդ. Քասքանտիկեանի. եւ այն ատեն, որ Վենետիկ կը մնար, մեծ հետաքրքրութեամբ եւ ուշադրութեամբ կը հետեւէր Ս. Ղազարի երիտասարդացած դրական շարժումին, եւ այդ հիացումը ան շարունակեց մինչեւ վերջ:

Կը հասնի դպրոցական արձակուրդի ստե-